# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2021 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ- ՆՈՅԵՄԲԵՐ , ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)

ԱԺԲԳ













2021 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1 տրիլիոն 410.4 մլրդ դրամ, որը կազմում է 2021թ. տարեկան հաստատված ցուցանիշի 97.9 %-ը և 2021թ. տարեկան ճշտված ցուցանիշի 89.8 %-ը: Ընդ որում, 2021 թ. փաստացի ցուցանիշը 2020թ. համապատասխան ցուցանիշից ավել է 13.4 %-ով կամ 166.4 մլրդ դրամով, 2019թ. ցուցանիշին գերազանցում է 7.3 %-ով կամ 96.3 մլրդ դրամով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 27.7 %-ով կամ 306.3 մլրդ դրամով:

2021 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին`

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 493.4 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 17.1 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 13.3 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 25.3 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 138.8 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 6.7 %-ով, սակայն 2019 թ. ցուցանիշից պակաս է շուրջ 10.5 %-ով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 2 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 388.5 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 2.6 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 3.8 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 21.3 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 98.7 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 10.7 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 10.3 %-ով, բայց 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 2.7 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 76.6 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 27.1 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 10 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 4.4 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 50.7 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 18 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 9.3 %-ով և 2018 թ. ցուցանիշից ավել է 12.5 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 31.8 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 21.4 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է շուրջ 11.2 %-ով, 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 51.1 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 39.1 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 75.7 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է մոտ 2.3 անգամ և 2018 թ. ցուցանիշից ավել է 2.4 անգամ,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են շուրջ 41.9 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է շուրջ 84.7 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է շուրջ 2.1 անգամ և 2018թ. ցուցանիշից ավել է 2.2 անգամ,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 54.9 մլրդ դրամ, որը 2020թ. համապատասխան ցուցանիշից ավել է 89 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 38.7 %-ով և 2018 թ. ցուցանիշից ավել է 65.3 %-ով:

* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները.

** Այլ հարկային եկամուտներում ներառված են` ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տույժերը և տուգանքները, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև` ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

*** ՀՀ 2021 թվական պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշտված ցուցանիշի աղբյուրը` ՀՀ ֆինանսների նախարարության ինտերակտիվ բյուջե

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ և ՀՀ ֆինանսների նախարարության ինտերակտիվ բյուջեն (հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշտված ցուցանիշ)